



Ճ Շ Մ Ա Ր Տ Ա Զ Ա Ն Ց Ո Ւ Թ Ց Ո Ւ Ն Ն Ե Ր



այ Եկեղեցվո և անոր Հայրապետական Սայր Աթոռին մասին վերջ տալու շփոթություն մը և թյուրիմացության մը մշուշը կտիրե միտքերում մեջ: Կա նաև կամավոր խեղաթյուրում մը կարգ մը շրջանակներու մեջ:

Մտային այս մոլորական վիճակը ավելի շեշտվեցավ ու տարածվեցավ Անթիլիասի ծանոթ ու ցավոտ խնդրին հետևանքով: Եվ ավելի ողբերգականն այն է, որ այս կացության գլխավոր պատասխանատուն հանդիսացավ Անթիլիասի Հայրապետական Աթոռի միաբանության մեկ մասը, գլխավորությամբ՝ անբաղձալի պայմաններու տակ ընտրված և ոչ օրինական ձևով օծված՝ «կաթողիկոս»-ին: Եվ բոլոր փորձերը, բանավոր սրբազրույթյամբ մը վեճը հարթելու և այդ Աթոռին վերադարձնելու վրդովված խաղաղությունն ու խանդարված կարգուկարգը, համաձայն թրիստոնեական-ավետարանական ոգվուն և անոր վրա հիմնված Հայաստանյայց Եկեղեցվո սկզբունքներուն, — մնացին ապարդյուն: Ընդլծվածքը՝ այդ Աթոռին պատկասող մոտավորապես 150 000 ժողովուրդին միջև, փոխանակ գոցվելու՝ ավելի բացվեցավ ու լայնցավ: Եվ վարակիչ հոսանքը, կաթողիկոսական տիտղոսի շուքով, տարածվեցավ մինչև օվկիանոսն անդին, ուր գտավ պատրաստ դետին: Եվ մոլորական այդ շուքը պտտոցողը, մինչև քաղաքական մթնոլորտի բարձր խավերուն մեջ, եղավ նույնպես հոգևորական մը, դրժելով իր ուխտին և իր կրոնական կոչումին, և կուսակցական փրփոցով հրահրելով եղբայրատենցությունը եկեղեցիներեն ներս:

Եվ այս ալիքը կոշվեցավ սկզբնավորումը «նոր ժամանակաշրջան»-ի մը, արժանի ծափահարության և քաջալերության: Եվ այդ քայլը առնվեցավ, որպեսզի «Հայաստան-

յայց Եկեղեցին ազատ մնա քաղաքական մարզանքներ և սովետական քարոզութենե, հայ եկեղեցականները դառնան ճշմարիտ հայ քրիստոնյաներ և ծառայեն միայն Հայ Եկեղեցվո և հայ ժողովուրդին, ազատ մնան չար ազդեցություններ և ազատ պահեն հայ հավատացյալներու պանդուխտ բազմությունները»: Դարձյալ, որպեսզի «Հայոց Եկեղեցին կրկես չդառնա քաղաքական գունավոր ու շիլ հաշիվներու, և որպեսզի հայ ժողովուրդի հոգևոր ու մշակութային ջանքերը ազատ զարգացման, ծաղկելու հնարավորություն ունենան:

Գեղեցիկ խոսքեր, զորս չէ կարելի շատորագրել, իբրև միտքերը մեկու մը, որ վեր ուզեր ըլլա, իր համախոհներով, քաղաքական — մենք կավելցենք՝ կուսակցական (Գ. Պ.) — գունավոր ու շիլ հաշիվներին:

Եվ ինչո՞ւ այս հավարը, ինչո՞ւ այս սահմանազանցությունը՝ Հայ Եկեղեցվո ծոցին մեջ փնտռելու նոր ավաճներ, որպես թե դուրացնելու համար ճակատը և պայքարելու նույնիսկ Եկեղեցիին դեմ, թունավոր սլաքներ արձակելով անոր կեդրոնական պատնեշին դեմ, որ կրոնական է և որուն ետև անհողորդ կանգնած է մեր Եկեղեցվո Պետը — Ընդհանրական Հայրապետը՝ իր հոգևոր սպառազինությամբ և մեր Հավատքի Զորագլուխը — են միայն առաջնորդված: Տեսնել այս Պետին մեջ «կալանավորը» և «անվանական հեղինակությունը», առնվազն անբարեխղճություն է: Կիսնայեք ավելի ծանր որակումը. կամ ըսենք ավելի թեթևը՝ ճշմարտագանգություն է:

Հակառակը պնդելու և հաստատելու համար՝ փաստերը պետք է խոսին:

Առնենք, օրինակ, նույնիսկ Կահիրեի Եպիսկոպոսական ժողովը, զոր անպատասխանատու գրիչ մը չքաշվեցավ կոշելու «չա-

րադետ»։ Այո, կար աղետ մը, և այդ աղետին աղբյուրը, որմէ բխեցաւ ՉԱՐԸ։ Եվ այդ Չարը խափանելու համար թափաւ թուր ջանքերը՝ Եկեղեցւոյ Պետին և Անոր գործակիցներուն կողմէ, հանգիպեցան ապառաժի։ Չարափոխվեցաւ, որոշ նկատառումներով ու կանխամտածումներով, այն ոգին, որ ներշնչած էր այդ ջանացողները, տեսնելով, կամ տեսնել կարծելով անոր մեջ ծածկամտութիւն մը՝ այդ Արարը ջնջելու։

Արդարեւ կար բան մը ջնջելիք, բայց ոչ Աթոռը, այլ զայն շրջապատող և անոր տիրացողը կալանավորող և Հայաստանայց Եկեղեցւոյ ոգիին և ավանդութիւններուն» անհավատարիմ կազմակերպութեան մը անտեղի միջամտութիւնը։ Զի ի՞նչ են այդ շար ոգին և ավանդութիւնները, եթէ ոչ նույն ինքն քրիստոնէական ոգին և անկէ ծնունդ առած ավանդութիւնները Հայ Եկեղեցւոյ պրիսմակէն անցած ու բյուրեղացած։ Եվ այս եկեղեցին կրօնական հաստատութիւն մըն է լոկ՝ յուրահատուկ կազմակերպութեամբ, նվիրապետութեամբ և սարքավորումով։ Եվ վեր կմնա ան, և պարտի մնալ, որեւէ քաղաքական-կուսակցական ստորոգելիներէ և ազդեցութիւններէ։

Եվ ի՞նչ է մեր Եկեղեցիին կեցվածքը քաղաքական իշխանութեանց հանդէպ։ Շատ հստակ է այն և առաքելական տեսութեամբ պարզաբանված, — հեռագանդի Ի ՔԱՂԱՔԱԿԱՆՍՍ այն իշխանութեան, որուն հովանավորութեան տակ կապրին իր հավատացյալները (Հոռով. ԺԳ 1—5)։ Այս առողջ ու խոհական տեսութեանն թելադրված՝ նույնիսկ Ս. Էջմիածնի «վերջին դուրս կաթողիկոսները» հաճախ կրկնած են, իրենց կոնգակներուն մեջ և գրավոր թէ բերանացի հրահանգներով, — ապրիլ ու գործել տեղական պայմաններուն համաձայն», առանց անշուշտ դոհելու իրենց գոտ կրօնական և հոգեւոր իրավասութիւններէն հովտ մանգամ։ Եվ մեր երկրորդական Աթոռները — մեզն ըլլալով նաեւ Անթիլիասի Մասնավորը, — «հայրապետահաստատ» ըլլան անոնք կամ ոչ, կհետեւին անշեղ այս ուղղութեան, պահելով միանգամայն իրենց վարչական անկախութիւնը, բավական է, որ անոնք չմատեն հավակնոտ ձգտում դեպի ի հոգեւոր անկախութիւն ևս։ Այս՝ դուռ կբանա հերձվածութեան և բաժանումներու։ Եկեղեցւոյ օրենքներն ու կանոնները, որ ունին հոգեւոր բնույթ ու բովանդակութիւն, կմնան անբռնաբարելի՝ ամեն տեղ և ամեն երկրի մեջ, ինչ փոփոխական վարչաձեւի տակ որ ալ գտնված ըլլա Եկեղեցին։

Քաղաքական հեղաշրջումներ մերթ կըստեղծեն ցավալի անբնականութիւններ ևս։ Ասոնք իրենց ժամանակավոր ծայրահեղութիւններով կցնցեն նաեւ կրօնական հաստատութիւնները — Եկեղեցին։ Այսպես եղավ, տարակույս չկա, նույնպէս այն երկրին մեջ, ուր կատարվի մեր կրօնական կեդրոնը։ Բայց ինչու՞ դժկամակիլ և շտապովանիլ, թէ մեր Եկեղեցին, հակառակ այդ սկզբնական ցնցումներուն, կարողացաւ, ոչ առանց վնասներու, անկասկած, պահել իր ինքնութիւնը անվթար, և շարունակել իր հոգեւոր առաքելութիւնը ոչ բոլորովին աննշան հաջողութիւններով։ Եվ այդ սկսած երջանկահիշատակ Տ. Գևորգ Զ. Կաթողիկոսի օրով։ Ս. Էջմիածնի, իր Մայր Աթոռով, մնադ միշտ իր հոգեւոր կեդրոնը և բարձրագոյն հեղինակութիւնը։ Դժվարին և դժպի պայմաններու մեջ անգամ Սփյուռքը գիտացավ հարգել այս հեղինակութիւնը, պատվովոր — թէ իսկ իրենմը՝ ըստ երևութիւն բնադատական, բայց ավելի ճիշտ լուսարանական — կեցվածքով, առանց զեղծանելու իր քաղաքացիական պարտականութեանց մեջ։ Սրբազրվեցան, վարչական գետնի վրա, իրավասական թյուրիմացութիւններ և կարգապահական զանցառութիւններ։

Իսկ եթէ շրջանի մը մեջ, ողբերգութեամբ մը ծայր տվող պառակտումի մը հետեւանքով, որոշ չափով նման խնդիր մը մնաց անուշ, — ադոր պատասխանատվութիւնը չէ կարելի և խղճի հետ հաշտ չէ բեռնել Մայր Աթոռի վրա։ Եկեղեցական կարգապահութեան բացակայութեան՝ քաջախիմեցաւ դարձյալ ոչ-եկեղեցական նկատումներով ու հաշիվներով։ Կուսակցական կարգապահութիւնը՝ անհանդուրժող ու քցանող, ծանր դտավ, որ եկեղեցական կարգապահութիւնն ալ իր հեղինակութիւնը դնել ի գործ՝ անսաստողներ պատժելու ի զգաստութիւն։ Եվ չգիշաւ ու չհամբերեց, որ ամենաբուժ ժամանակը իր դերը կատարել՝ տխուր և ընդվզեցուցիչ դեպքերը բյուրեղացնելու, կացութիւնը պարզելու և խաղաղութիւնն ու բնականոնութիւնը վերադարձնելու։

Հիշեցնենք ավելի հեռավոր — կիսադարյան — տխուր անցյալ մը, ուր շփոթեցան երկու դերեր, — եկեղեցականն ու կուսակցականը։ Դրվագ մը միայն և «մնացածը իմաստաւիբել», պիտի ըսեր մեր Նարեկացին։

Ապարթանական, չըսելու համար՝ ապերասան խրոխտութիւնը Ե-ի մը գրչին, որ կհանդգնէր գլխավոր շրջել իմաստը Լեռան քաղաքի «Երանի»-ներուն, և հակադրել անոնց իր երանելի «Երանիները», պատգամե-

լով. «Հիսուս ըսած է... իսկ ես կրսեմ...»: Եվ նա, իր այս հակաքրիստոնեական պատգամին մեջ կխտացնե՞ր և՛ իր անձնական, և՛ իր կուսակցական դավանանքը: Նա պատկառանքն իսկ զլացած էր Տերունական աղոթքի մը ընթացքին...: Ավելի չենք ընդարձակվիր, շերթալու համար մինչև դեպքերու նորագույն ընկույթուն, մինչև խղճագիտություն:

Եվ հիմակ, Շ-ին ժառանգորդներն ու հաջորդները այլ-թմբով կթակեն կամ կդափեն: Հոգեփոխություն, դժվար է հաստատել: Բայց եթե ստուգիվ ասոնք ունեցեր են իրենց հոգեփոխությունը, ինչո՞ւ չեն ուզեր հավատալ, թե իրենց երբեմնի ճամբեն քաղող ուրիշներ ալ կրնան ունենալ նույն հոգեփոխությունը: Եթե երեկ ուրացեր են և հայնձայն, և այսօր կթողուն, որ փափաղորդներ ունենան իրենց դավանաճե՞ն ու օրհնե՞նք, ինչո՞ւ տարակուսի: Ի՞նչ տարբերություն՝ ըստ էության՝ այս երկու մակերևացությունց և տեղատվությանց միջև:— Ձե՛նք կանգնած փաղափական գետնի վրա՝ ո՞ր մերը չէ:— Ուստի կրսենք, կա՞՝ այս փոփոխությունը. կույրերն ալ կարող են տեսնել այդպիսի տղ հոգևոր կույրերը: Այս վերջինները «կայանավոր» մը պիտի տեսնեն Եկեղեցվո՞ր բարձրագույն հեղինակության մեջ, որ ազատորեն կկիրարկե իր ավետարանչի և եկեղեցաշինության—նյութական և բարոյական իմաստով— սրբազան պաշտոնը: Իր խոսքը, այնքան սրտագին, ոչ թե թելադրված է քաղաքական իշխանութենե, այլ լիցված է «աստվածեղեն շղթ»-ով և Հոգվույն շնորհով: Եթե ունի նաև հայրենասիրական խոսք՝ այդ ոչ թե ոչ-եկեղեցական և ապակրոնական գաղափարաբանության մը ժրխտական դրույթն է, այլ առաքելական պատվերի մը ողջախոհութենեն կառնե առավելապես իր ներշնչումն ու արդարացումը:

Մենք դիտենք, թե Մայր Աթոռի հանդեպ կասկածոտ ու բացասական դիրքի վրա դնվողներուն մեջ անգամ կան համոզվածներ այս ճշմարտության: Բայց ասոնք ալ ուրիշ կերպով կայանավորեն են և իրենց լիզուն կաշկանդված է: Եվ այս կացությունը կկոչվի կուսակցական կարգապահություն: Եվ զորավոր են ասոր մեջ, ի գին ճշմարտության զոհաբերումին, եթե այդ կպահանջե կուսակցական տեսակետը կամ շահը: Բայց երանի թե այս ոգին չառաջնորդեր ճշմարտագնացությանց՝ իսկապիս իրենց չպատկանած մարզին մեջ:

Եվ ահա այսօր, կուսակցական նույն այս կարգապահությունը կբաշխվի ի տակավին

Անթրիասի մեջ ծնունդ առած և Եկեղեցվո՞ր ՄԱՐՄԻՆը փեռեկող շարժումը:

Ողջմտորեն և անախապաշարորեն թող դիտվի ու դատվի այս շարժումը և պիտի ճշմարտվի այս իրողությունը: Այս լույսին տակ թող բերվի Կահիրեի Եպիսկոպոսական ժողովին «Համաձայնագիր»-ը, տեսնելու համար, թե ինչ կա անոր մեջ կասկածահարույց՝ երևակայված դավադրության մը առնչությամբ: «Անթրիասի Աթոռը քանդել...»— և ո՞ր ծածկված է այս եղջերվաքաղը, երբ այդ Համաձայնագրին մեջ, ոչ միայն անձեռնմխելի հայտարարված է այդ Աթոռին վարչական անկախությունը, անշուշտ իր սեղմ—և այժմ ոչ իսկ պատմական, սահմաններուն մեջ, այլ նաև ու մանավանդ ավելցված է նոր ու պատվաբեր առաջադրություն մը՝ այս Աթոռի պետին անունն ալ հիշատակելու, սուրբ պատարագի միջոցին, ի շարս նվիրապետական մյուս Աթոռներուն և Ամենայն Հայոց Հայրապետի անունն անմիջապես հետո, բոլոր եկեղեցիներուն մեջ, Ընդհանրական Հայրապետության իրավական սահմաններեն ներս իսկ: Ահա այդ Համաձայնագրին սույն առաջադրության վերաբերյալ է հոգվածը. «Սուրբ պատարագի միջոցին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին անվան հիշատակությունը կկատարվի Հայաստանյայց Եկեղեցվո՞ր բոլոր թեմերուն մեջ անխտիր, ինչպես նաև Հայրապետական մաղթանք յանուն Ս. Էջմիածնի և Ընդհանրական Հայրապետի՝ Նույնպես, այդ բոլոր թեմերուն մեջ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվան հիշատակութենեն անմիջապես հետո, ՊԻՏԻ ՀԻՇԱՍԱՆԻ ՆԱԵՎ ԱՆՈՒՆԸ ԱՆԹԻՒԱՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ»:

Այո, այդ ժողովը, իր ըրածին դիտակից և հետո հետին միտքե, դատապարտելով դատապարտած է անջատողական ոգին, որ կբխի անհանդուրժող և անհանդուրժելի հավակնության մը մոռյուն և որուն հետ չի կրնար հաշտվիլ երբեք Եկեղեցվո՞ր միության կամ միասնականության անփոփոխելի գաղափարը:

Պիտի չուզեի ծանրանալ Ս. Էջմիածնի ներկա Գահակալին, Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա շնորհազարդ Կաթողիկոսին, այս խնդրի առնչությամբ, տանցած կեցվածքին վրա, որ այնքան բուռն հարձակումներու թիրախ կդառնա, այնքան անիրավ ու երկվակալածին վերագրումներով: Անշուշտ դժվար է, որ յուր թափանցե նախապաշարումներով մթափածած միտքերեն ներս՝ շողափելու համար ճշմարտությունը իր մերկություն մեջ, և չիմայու, կամա թե ակամա, ճշմարտագնացություններու մեջ: Զու-

նենալու երազական սարսափը՝ «կալանավոր» տեսնելու Ամենայն Հայոց Հայրապետը— Մասիսի Քաջքը— ե՞ն արդյոք— և անոր հեղինակությունը «կաշկանդված»:

Նույն այդ կաթողիկոսն էր, որ, համարձակ, հրավեր ուղղեց քանիցս՝ Անթիլիասի կաթողիկոսությունյան արժանի դատված Տ. Զարեհ սրբազանին, կողմերու ներկայացուցիչներով երթալու Ս. էջմիածին և Մայր Աթոհին մեջ, անհասկացողությունց լարձումով և երկուստեք բանավոր զիջումներով լուծել կնճիռը՝ բարյացակամորեն և ամենապատվավոր եղանակով: «Դա՛վ», այս ա՛յնքան սրտցավ ու սրտախտսիկ հրավերին մեջ,— թող ան երևան գար, նույնիսկ այն երևակալական հետևանքներուն,— կամաքնամ ըսելու եղբրախան,— որոնց դեմ արիական կեցվածք մը կակնվալի կուսակցական գաղափարաբանությամբ կամ գաղափարապաշտությանը զինված հերոսներու կողմի: Իսկ մենք հարյուր առ հարյուր վստահ էինք և ենք, որ Հայրապետին այս հրավերները անխաղաղ սիրտ մը և աներկյուղ համոզումի մը անկասկածելի վկայությունն ունեին միայն: Այդ կերպով, և պատմական սթանդինի դրվագով մը, պիտի իրականանար Եկեղեցվոր վտանգված միությունը և պիտի գորանար ու ամրապնդվեր քրիստոնեական հավատքի կապը մեր Միաձեռնիմե Եկեղեցիի բոլոր զավակներուն մեջ: Պիտի ցնդեր նախապաշարունակներու հետզհետե թանձրացող մշուշը: Կուսակցական խորշակո այլևս պիտի չկրնար շնչել ու խաղաղեցնել Եկեղեցվոր զուտ կրոնական ռգի՛ն՝ մեր հայրերու շունչով և Խոսեավորչի մշտավառով անշեղ րոց առած: Պիտի տապալել ռոքի պատվանդան մը և խորտակվել կուլան մը՝ անշատողական ձեռնադիր իր նպատակին հասցնելու:

Մենք պիտի կրնայինք հրատարակել նաև մեր երեք գրությունները՝ անձնական և մտերմական, ուղղված անոր՝ որ արժանի տիտղոսը չէ գտնի անոնց վրա և կարդացեր է միայն «առ ի հետաբերությունը» և մանավանդ տեսեր է անոնց մեջ «անընդունելուներ, վերագրումներ և... զրգուրություններ»: Ա՛րդյոք մեր եղբայրական թեաղությունները՝ և կատարած է «զրգուրություններ», այս երկու բառերը շփոթելով իրարու հետ:

Դարձյալ իրեն հետ տեսակցողի մը հարցումին, թե «Դուք պատասխանեցի՞ք Գարեգին պատրիարքին», պատասխաներ է. «Մենք անոր պատասխանելը հաճանքիմե Տ. Զարեհ եպիսկոպոսին...»: Պատասխանին հեղեղական ձևը չէ, որ կվրդովե մեր հոգին, այլ այն մտածումը, թե Տ. Զարեհ եպիսկոպոս մեկուս

է (գոնե բարոյապես) կաթողիկոսի տիտղոսով շքավորված նույն Տ. Զարեհ եպիսկոպոսին մեջ, որ չի գիտեր, թե այդ տիտղոսը չի ջնջեր, ոչ միայն եպիսկոպոսական, այլ նաև քահանայական օծումն ու աստիճանը. թողունք, որ իր վրա կատարված կաթողիկոսական օծումն ալ չի կրեր դժբախտաբար կնիքը օրինավորության: Եվ գիտնալու էր գոնե, թե կաթողիկոս մը կկոչվի նաև եպիսկոպոսապետ և քահանայապետ. և երբ պատարագ՝ կմերկանա և՛ եպիսկոպոսական, և՛ կաթողիկոսական զգեստավորումներ և որպես պարզ քահանա կկատարե սուրբ պատարագի խորհուրդը: Ցամենայն դեպս, Շնորհալի մը այս վերաբերումը չէ ունեցած իր «ժպիտի» հակառակորդին հանդեպ նույնիսկ, առանց նկատի առնելու անոր լուկ քահանայական աստիճանը: Եվ երևակայել, որ այս Աթոռը երբեմն կփորձվի արժեքավորել պիտակաբար՝ կոչելով զայն «Շնորհալի Աթոռ»:

Փակագիր մըն ալ, և վերջացնենք:

Վաղեմի և շատ սիրելի ու մտերիմ բարեկամ մը,— բարեկամ նաև անոր, որ «կաթողիկոսական տիտղոսներուն և եկեղեցական կանոններուն անձանք մը» կարծել կեղծած է վերոհիշյալ նամակները ստորագրողը,— որուն հետ, այս խնդրին շուրջ, ունեցեր ենք բազում թղթակցություններ, ինձ կզբեր իր վերջին նամակներին մեկուն մեջ բառ առ բառ. «Անթիլիասի մեջ Կրիկիտ եպիսկոպոսները ժողով կունենան և կհանգին առ եղբայրացության, թե ՊԵՏԲ Է ԸՆԴՈՒՆԻՆ ԿԱԶՆԻՐԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (մեծագրություններ մերն են—Գ. Պ.)» ուրեմն ընդունելով կստորագրեն էջմիածնի վեհին ուղղված թուղթը: Փառեն սրբազան, երբ կտեսնե, որ առանց զայնադալի գործը վերջացած է, ետ կառնե իր ստորագրությունը, որուն կհետևի Դերենիկը: Խորհրդածությունն ու մեկնությունը կթողունք ընթերցողի սրամտության և ողջադատության...:

Մենք ակամա կամքով տուն տվինք մեր գրչին սույն տխուր անդրադարձումները, վրշտահար սրտով տեսնելով անզուպ և անկշիռ քայլերը՝ ճշմարտազանցությանց մեջ թարթափող ու խարխափող միտքերու կողմե առնված: Չունինք միամտությունը, թե անոնք կարող են ետ քաշել տալ այդ քայլերը հոգեվոր մարզին մեջ անպատասխանատու անձինք. բայց մեծ է իղձը մեր սրտին, որ գոնե բուն պատասխանատուն և իր եկեղեցական մեծ ու փոքր գործակիցները աստվածային շնորհն ու իմաստությունը ունենան՝ արիական ցնցումով մը գտնելու ավետարանական լայնը հանող «նեղ ճամբան» և հոն մտնելու: Այդ ճամբան միայն կարող է հասցնել փրկարար ճշմարտության:

Գ. Պ.

Այս գրությունը վերջացուցեր էինք արդեն, երբ մեր ձեռքն անցավ «Այգ»-ի հոկտեմբեր 29-ի թիվը, որուն մեջ «Նոր դարագլխի մրմասին» հոդված մը ստորագրած էր պր. Մանասե Կ. Սեակ։ Այնտեղ կհառաբանվի այս նախ Կ. Սեակի «Դարագլուխը» բացող «Իմաստուն և դրական որոշումը» Ամերիկահայ ԱԶԳԱՅԻՆ (կթվի, թե չէ այն եկեղեցական, հետևաբար կապ չի կրնար ունենալ Հայաստանյայց եկեղեցվո հետ) քեմի և Մեծի Տանն Կիլիկիո Նորին Ս. Օծուքյուն Տ. Տ. Զարեհ Ա. կաթողիկոսին կողմն արված։

«Իմաստուններուն իմաստությունը կորսրեցնող» գերագույն իմաստությունը կա։ Ան միայն գիտե ժամանակը դարագլուխներ բանալու, ոչ թե հակառակության համառ, այլ բանավոր համաձայնության ողջմիտ ոգիով, ոչ թե ամբարտավանությամբ, այլ խոնարհամտությամբ։ Այս

պարտի ըլլալ հիմը «Իմաստուն և դրական որոշում»-ին։ «Դարագլուխ մը անդու ախատանքի, ինքնամիտման, ԱՊԱՇԽԱՐԱՆՔԻ (մենք խոշորագրած ենք— Գ. Պ.) և նվիրումի» կբացվի միայն ու միայն այս ոգիով։ Այս ոգիով և սրտագին իղձով քանիցս հրավեր կարդացվեցավ բայց չգտնվեցավ ականջ մը, որ լսեր։ Ակնարկված «պատմական բայլը» ուրիշ բան ունի արձանագրելիք Հայաստանյայց եկեղեցվո պատմության մեջ։ «Ապաշխարանք» մը անկարելի է, արդարև, անոր կամ անոնց կողմն, որ իմաստությունը չեն ունենար մոտենալու այդ ոգիին։

Գ. Պ.

(«ՇՈՂԱԿԱԹ», պաշտոնաբեր Ս. Խա; Դպրեվանուց Պատրիարքության նայոց Թուրքիո, 1957 թ. հոկտեմբեր—նոյեմբեր, № 10—11)

